ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Թեմատիկ պլանավորում

2-րդ դասարան

Շաբաթական 1 ժամ

Դասագրքի հեղինակներ՝ Յ. Յուզբաշյան, Ա. Փահլևանյան

| Դաս | Էջ | Թեմա «Երաժշտության երեք տեսակները» 8 ժամ | ժամ |
|---|---|---|---|
| Նպատակ | | • Զարգացնել՝ Երաժշտության մեջ արտահայտչական միջոցները, խոսքի մասերը զգալու կարողությունը։<br>• Զարգացնել երկմաս երգերը ճանաչելու և տարբերելու կարողությունը։<br>• Զարգացնել երաժշտությունը վերլուծելու ընդունակությունը։<br>• Զարգացնել ռիթմական նվագարաններով նվագակցություններ կատարելու կարողությունը։ | |
| Վերջնարդյունք | | • Իմանալ ինչպես մայրենի լեզուն,այնպես էլ երաժշտական լեզուն ունի խոսքի մասեր, դրանք են ՝հնչյունը,մոտիվը, ֆրազը, նախադասությունը և այլն։<br>• Ճանաչել երաժշտության արտահայտչական միջոցները<br>• Կատարել ռիթմական նվագարաններով նվագակցություններ։ | |
| 1 | 5-6 | «Ողջույն դպրոց» երգի կրկնություն (երաժշ.՝ Մ. Մազման-յանի, խոսք՝ Ն. Միքայելյանի)<br>Ուսուցանել՝ Ռ. Ալթունյանի «Դպրոցի ճամփան» երգը,<br>Ունկնդրել 1-ին դասարանում անցած նյութերը։ | 1 |
| 2-3 | 7-9 | «Քայլերգը և նրա տեսակները»<br>Ուսուցանել՝ Ռ. Պետրոսյանի «Ուղիղ կարգով» և հայ. ժող. «Հայրենիք» երգերը,<br>Ունկնդրել՝ Պ. Ի. Չայկովսկու «Փայտե զինվորների քայլեր-գը»,<br>Մ. Մազմանյանի «Քայլերգը»,<br>Դ. Կաբալևսկու «Քայլերգի երեք տեսակները»։ | 2 |
| 4 | 13 | «Պար»<br>Ունկնդրել՝ Կոմիտասի «Շուշիկի պարը»,<br>Ա. Խաչատրյանի «Ծերունիների պարը»,<br>Ուսուցանել՝ հայ. ժող. «Նախշու՛ն կաքավ, կաքավի՛կ» պար-երգը։ | 1 |
| 5 | 13 | Պարի տեսակները<br>Ունկնդրել՝ Ա. Խաչատրյանի «Աղջիկների պարը», | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| | | Ա.Սպենդիարյանի «Տղամարդկանց պարը»,<br>Ուսուցանել՝ հայ. ժող. «Հոպա զարկե՛ ու քելե՛»  պարերգը: | |
| 6 | 14-15 | Երաժշտական հնչյունների տևողությունները, ռիթմ և պաուզա,<br>Ուսուցանել՝ «Քեռին եկավ մեր բակը» ժող երգը: | 1 |
| 7 | | Ունկնդրել՝ Էդ. Միրզոյանի «Տիկնիկների պարը»,<br>Ա. Լուսինյանի «Արջուկների պարը»,<br>Մ. Մազմանյանի «Կատվի պարը»<br>Վերհիշել՝ «Եկեք մրցենք» երգը: | 1 |
| 8 | 19-21 | Երգը և նրա տեսակները<br>Ունկնդրել՝ Կոմիտասի «Կաքավիկը»,<br>Մոցարտի «Օրորոցայինը»,<br>Ռ. Մելիքյանի «Մանուկն ու ջուրը»,<br>Ա. Խաչատրյանի «Օրորոցայինը»,<br>Ուսուցանել՝ հայկ. ժող. «Նանիկ ասեմ քալիկիս»,<br>«Գացեք, տեսեք»,<br>«Ջան գառնուկ» երգերը: | 1 |
| Դաս | Էջ | Թեմա «Ինչի մասին է պատմում երաժշտությունը» 8 ժամ | ժամ |

| | |
|---|---|
| Նպատակը | • Զարգացնել  երաժշտության տեսակները լսելու, ընկալելու և տարբերելու կարողությունը:<br>• Զարգացնել երգերի մեղեդիները ռիթմական վանկերով /թի-թի, թա, թա-ա/ կատարելու կարողությունը:<br>• Զարգացնել երգերը թեթև և նուրբ, բնական ձայնով կատարելու հմտությունը:<br>• Զարգացնել առանց լարվածության, մաքուր ինտոնացիայով երգելու, սեփական ձայնը ընկերների ձայնին հարմարեցնելու կարողությունը:<br>• Ծանոթացնել «թա-ա» կես տևողության հնչյունին և նոտագրությանը:<br>• Զարգացնել երաժշտական խաղերում կերպարը ճիշտ վերարտադրելու կարողությունը: |
| Վերջնար-դյունքները | • Տարբերակի քայլերգային երաժշտությունը;<br>• Ճիշտ կեցվածքով,ճիշտ շնչառությամբ և առոգանությամբ կատարի քայլերգային երգը:<br>• Կատարի քայլք՝ երաժշտության բնույթին, ռիթմին, տեմպին համապատասխան: |

| | | | |
|---|---|---|---|
| | | • Իմանա երաժշտական հնչյունների տևողությունը և իրար հաջորդող տարբեր տևողությունների փոխհարաբերության անվանումը:<br>• Ներկայացնի մեղեդու ռիթմի մեջ դադարների անվանումը: | |
| 9-10 | 28-29 | Ունկնդրել Լ. Վ. Բեթհովենի «Ուրախ, տխուր» ստեղծագործությունը,<br>Ուսուցանել Մ. Մազմանյանի «Աքլորիկի, թխսի և ճուտիկի երգը»: | 2 |
| 11 | 30-31 | Երաժշտությունը արտահայտում է բնավորության գծեր<br>Ունկնդրել Դ. Կաբալևսկու «Երեք ընկերուհիներ» ստեղծագործությունը,<br>Ուսուցանել ռուս. ժող «Во поле берёза стояла» երգը, կամ Ա. Լուսինյանի «Ուրախ առավոտ» երգը | 1 |
| 12-13 | 32-33 | Երաժշտությունը նաև նկարագրում է<br>Ունկնդրել Գ. Չթչյանի «Անձրև» և Ա. Լուսինյանի «Հեծանվորդը» ստեղծագործությունները<br>Ուսուցանել «Արջի վիշտը» և «Վարդավառ» ժող. երգերը: | 2 |
| 14-15 | 34-35 | Ուսուցանել Ռ. Պետրոսյանի «Նոր տարի»,<br>Գ. Չթչյանի «Մանուկներն ու Նոր-տարին»,<br>ռուսական «Ёлочка» երգերը,<br>Ունկնդրել Նոր տարվա երգեր | 2 |
| 16 | 36-37 | 1-ին կիսամյակի ամփոփում-դաս համերգ | 1 |
| Դաս | Էջ | Թեմա «Ու՞ր են տանում երգը, պարը, քայլերգը» 8 ժամ | ժամ |
| Նպատակը | | • Զարգացնել երաժշտական ստեղծագործություններ լսելու և երաժշտության տեսակները զգալու, համեմատելու կարողությունը:<br>• Զարգացնել մաքուր ինտոնացիայով և արտահայտիչ երգելու հմտությունը:<br>• Զարգացնել երաժշտական լսողությունը:<br>• Զարգացնել պարային շարժումները և ամբողջական պարեր կատարելու կարողությունները: | |
| Վերջնարդյունքները | | • Լսի, զգա և համեմատի երաժշտության տեսակները:<br>• Երգի ձեռքի նշաններով և նոտաներով:<br>• Երգի արտահայտիչ և մաքուր ինտոնացիայով: | |
| 17 | 42-45 | Ծանոթանալ «օպերա, բալետ» ժանրերի հետ: | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| | | Ունկնդրել Մ. Մազմանյանի «Աքլորիկի, թխսի, ճուտիկի երգը» «Ճուտիկ» մանկական օպերայից,<br>Ա. Խաչատրյանի «Աղջիկների պարը» «Գայանե» բալետից: | |
| 18 | 46-47 | Ծանոթանալ «սիմֆոնիա» ժանրի հետ<br>Ունկնդրել Է. Միրզոյանի «Պատանեկան» սիմֆոնիայից մեկ հատված,<br>Կրկնել հայ. ժող. «Արև, արև» երգը: | 1 |
| 19-20 | 48-49 | «Երգը օպերայում, բալետում և սիմֆոնիայում»<br>Ուսուցանել Մ. Մազմանյանի «Թխսի և կատվի կռիվը» և հայ. ժող. «Մայրիկիս» երգերը,<br>Ունկնդրել Ա. Խաչատրյանի «Օրորոցայինը» «Գայանե» բալետից և հատվածներ Պ. Չայկովսկու, Է. Միրզոյանի սիմֆոնիաներից: | 2 |
| 21-22 | 50-53 | «Պարը բալետում, օպերայում և սիմֆոնիայում»<br>Ունկնդրել Ա. Խաչատրյանի «Վարդագույն աղջիկների պարը», «Սուսերով պարը» «Գայանե» բալետից,<br>Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայից «Տղամարդկանց պարը»,<br>Մ. Մազմանյանի «Կատվի պարերգը» «Ճուտիկ» օպերայից,<br>Պ. Չայկովսկու «Փոքրիկ կարապների պարը» «Կարապի լիճը» բալետից:<br>Ուսուցանել հայ. ժող. «Հանիկ, նայ՛ երգը: | 2 |
| 23-24 | 55-56 | «Քայլերգը օպերայում, բալետում, սիմֆոնիայում»<br>Ունկնդրել քայլերգեր Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետից և Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայից,<br>Ա. Խաչատրյանի երկրորդ սիմֆոնիայից «Որսկան ախպերը» և Լ. Վ.Բեթհովենի «Ուրախության ձոներգը» 9-րդ սիմֆոնիայից,<br>Ուսուցանել «Գովք Զամբարին» երգը: | 2 |
| Դաս | Էջ | Թեմա ▯ «Ի՞նչ է երաժշտական խոսքը» 8 ժամ | Ժամ |
| **Նպատակը** | | • Ծանոթացնել ժողովրդական, աշուղական և դասական երաժշտության նմուշներին<br>• զարգացնել խոսակցական և երաժշտական ինտոնացիաների ընդհանրությունները և տարբերությունները զգալու կարողություն<br>• երգերի և ձայնավարժությունների միջոցով զարգացնել երգչային կատարողական հմտությունները | |

| | | | |
|---|---|---|---|
| | | • զարգացնել միաձայն երգերը մաքուր ինտոնացիայով երգելու կարողությունը<br>• զարգացնել տարբեր բնույթի ինտոնացիաներով քառատող և համապատասխան մեղեդիներ ստեղծելու կարողությունը<br>• զարգացնել երկձայն մեղեդիները ձեռքի նշաններով և նոտաներով երգելու կարողությունը | |
| **Վերջնարդյունք-ները** | | • երգի միաձայն մեղեդիները մաքուր ինտոնացիայով<br>• ստեղծի տարբեր բնույթի ինտոնացիաներով քառատողեր և համապատասխան մեղեդիներ<br>• երգի երկձայն մեղեդիները ձեռքի նշաններով և նոտաներով | |
| 25-26 | 58-59 | Ի՞նչ է երաժշտական խոսքը<br>Ունկնդրել Բեթհովենի «Արջամուկ» երգը,<br>Ժ. Բիզեի «Տղաների քայլերգը» «Կարմեն» օպերայից<br>Ռ. Մելիքյանի «Կլոր պարը», «Գարուն եկավ» երգերը,<br>Ուսուցանել «Գարուն եկավ» երգը: | 2 |
| 27-28 | 60-61 | Երաժշտական ստեղծագործության կառուցվածքը<br>Ունկնդրել Ռ. Մելիքյանի «Մանուկն ու ջուրը» երգը,<br>Յ. Բրամսի «Հունգարական պարը»,<br>Ուսուցանել հայ. ժող. «Լեպհո, լե, լե» երգը: | 2 |
| 29-30 | 62-63 | Տեմբր (ձայներանգ)<br>Ունկնդրել Ա. Սպենդիարյանի «Օրորոցայինը» ջութակի և թավջութակի կատարմամբ,<br>Ուսուցանել Ա. Լուսինյանի «Բարձրիկ Հայաստան» երգը: | 2 |
| 31-32 | 66-67 | Ամփոփել տարվա ընթացքում անցած նյութը՝ երաժշտատե-սական գիտելիքները, երգերը և այլն:<br>Կազմակերպել դաս-համերգ, երաժշտական ժամանց և վիկ-տորինաներ: | 2 |